

## 26.10.2016 Երեւան

Հարցում.

ՀՀ Վերահսկիչ պալատն անցած տարի ստուգումներ է իրականացրել Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային գործակալություններում՝ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ընտանեկան և սոցիալական նպաստների, հրատապ դրամական օգնության և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման գործընթացների հետ կապված:

Ուսումնասիրվել են «Նպաստ» տեղեկատվական համակարգը վարող թվով 38 տարածքային գործակալություններից 8-ի՝ Կոտայքի մարզի Հրազդանի, Արմավյանի, Եղվարդի և Չարենցավանի, Արագածոտնի մարզի Աշտարակի, Ապարանի, Թալինի, Ծաղկահովիտի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից նպաստների նշանակման գործընթացները:

ՎՊ-ն հայտնաբերել է տարբեր բնույթի մի շարք խախտումներ, ընդհանուր առմամբ՝ Կոտայքի և Արագածոտնի մարզպետարանների ենթակայության 8 գործակալություններում արձանագրվել է 571 դեպք՝ 105 մլն 599.5 հազար դրամ գումարի չափով:

Սրանից հետո մի քանի տարածքային գործակալությունների պետեր ազատվեցին աշխատանքից, իսկ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ծաղկահովիտի տարածքային գործակալության պետ Նորայր Անտոնյանը շարունակում է աշխատել:

Արդյո՞ք հայտնաբերված չարաշահումները նրան առնվազն աշխատանքից ազատելու հիմք չէին:

Ո՞րն է պատճառը, որ նա շարունակում է աշխատել այդ կառույցում:  
Ծաղկահովիտցիները՝ գյուղապետ Նորիկ Հակոբյանի միջոցով մեզ

խնդրեցին պարզաբանում խնդրել նրան աշխատանքից չազատելու հետ կապված եւ տեղեկացնել, որ Անտոնյանի կողմից անբարեխիղճ աշխատանքը շարունակվում է:

կանխավ շնորհակալ եմ՝ լրագրող **Սյուզաննա Պողոսյան 25.10.2016**



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4, Հեռ/Ֆաքս (+374 232) 3 22 51  
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51  
0201 с. Ashtarak, V. Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

N \_\_\_\_\_  
Ձեր 26.10. 2016թ. լրագրական հարցմանը

**Ք. Երեվան, Իսրայելյան 37, Հայկական  
Ժամանակ թերթի լրագրող  
Սյուզաննա Պողոսյանին**

2015թ. ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից ստուգումներ են իրականացվել ՀՀ Արագածոտնի մարզի մի շարք կազմակերպություններում, այդ թվում նաև Ծաղկահովիտի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում:

Ստուգման արդյունքում արձանագրվել է 51 խախտում, որի ընդհանուր գումարը կազմել է 8960.0 հի դրամ: Նշված գումարից 7437,5-ը ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 30-ի N145-Ն որոշմամբ զիջվել է ՍԱՏԳ-ին կից սոցիալական աջակցության խորհրդի կողմից, իսկ մնացած գումարը՝ 1513,0 շահառուների հետ կնքված ժամանակացույցով ամբողջությամբ հետ է գանձվել: Ընդ որում Վերահսկիչ պալատի կողմից յուրացման դեպք չի արձանագրվել, գումարն ամբողջությամբ ստացվել է շահառուների կողմից:

Նշված խախտումները, բնականաբար, գործակալության աշխատակիցների թերացումների արդյունքն է, ինչպես նաև <<Նորք>> ՏՎԿ-ի կողմից հարակից բազաների ուշացումը:

Վերահսկիչ պալատի ստուգման արդյունքները ՍԱՏԳ-ների պետերի մասնակցությամբ քննարկվել է ՀՀ վարչապետի մոտ և տրվել կոնկրետ հանձնարարականներ:

Ստուգման արդյունքները բազմիցս քննարկվել են նաև մարզպետի մոտ:

2015թ. սեպտեմբերի 29-ին Ծաղկահովիտի ՍԱՏԳ-ի պետ Նորայր Անտոնյանը , գործակալության մասնագետներ Ռազմիկ Վարդանյանը և Նվեր Խաչատրյանը նշված խախտումների համար ենթարկվել են կարգապահական տույժերի:

Վերահսկիչ պալատի ստուգումներից հետո գործակալության աշխատանքներում նոր խախտումներ չեն արձանագրվել:

**Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ**